

Հրաշյա ՄՄՐՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒԾ ԲՐՈՆԶԻ ԵՎ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՑՐՁԱՆՆԵՐԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հյուսիս-արևմտյան Հայաստանում և հատկապես Շիրակում, երկրագործությունը զարգացել է հնուց ի վեր: Այդ մասին է վկայում դեռևս Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ. «Դու, -ասում են, - Շարայի որկորն ունես, բայց մենք Շիրակի ամբարները չտենեք»¹: Սակայն այս խնդրի ուսումնասիրության համար անփոխարինելի աղբյուր է հանդիսանում ուշ բրոնզի և երկարի դարաշրջանների դամբարաններից ու բնակավայրերից հայտնաբերված հնագիտական նյութը:

Մանգաղներ. Երկրագործական գործիքների մեջ ամենատարածվածը հնձող գործիքներն են, որոնք հիմնականում կրկնելով պրմանքարիտարյան հուշարձաններից հայտնի բաղադրովի քարե ներդիրներով մանգաղների ձևերը. կատարելագործվում են ուշ բրոնզի և երկարի դարաշրջաններում: Հարկ է նշել, որ հիշյալ ժամանակաշրջանում Հայաստանում դեռևս կենցաղավարում էին քարե ներդիրով մանգաղները: Այդպիսիք հայտնաբերվել են Գառնիի և Դվինի ուշ բրոնզիքարյան բնակավայրերից², Նոյեմբերյանի մ. թ. ա. 9-8-րդ դարերով բվագրվող համալիրից և այլ հնավայրերից³: Հայաստանից հայտնի մետաղյա մանգաղների ուսումնասիրությամբ զբաղվել են հնագետներ Ֆ. Խաչատրյանը, Հ. Մարտիրոսյանը: Նրանք այս աշխատանքային գործիքները ներկայացնում են երկու հիմնական տիպերով՝ իմքը բնդունելով մեջքի, աշխատաբերանի կառուցվածքային որոշ տարրերությունները⁴: Խոկ Գ. Արեջյանը, խոսելով Արթիկից հայտնաբերված բրոնզե և երկարե մանգաղների մասին, չի խորանում նրանց տիպարանության մեջ, այլ նշում է երկարե մանգաղների գործածությամբ արտադրողականության բարձրացնան փաստի մասին⁵: Արթիկի դամբարանադաշտից, Լենինականից, Ջերիից, Անիից, Շիրակավանից և Կիրովականից հայտնաբերվել են բրոնզե և երկարե մանգաղներ: Հնձող գործիքների նման լայն տարածումը պայմանավորված է և երկրագործության, և անասնապահության զարգացմանը:

Մեր կողմից ներկայացվող բրոնզե մանգաղները տիպարանորեն նույնն են: Նրանց ընդհանրությունն այն է, որ բոլորի շեղերն ել հարը են, ունեն լայն, երբեմն ել նեղ կտրող մաս: Մեջքի մասում շատ քիչ հաստանում և բարակում են դեպի սայրը: Կորառի լայնացող մասում, եզրերին արկած են անցրեր՝ բռնակն ամրացնելու համար: Բայց ընդհանրություններից զատ՝ սրանք ունեն արտաքին նշանների որոշ տարրերություններ, որից ելնելով՝ մենք բաժանել ենք տեսակների: ա) մանգաղներ, որոնց բռնակն ամրացվող հատվածը թեր է և ունի երկու անցք՝ բռնակն ամրացնելու համար: Այդպիսիք են Արթիկի թիվ 434, 633 դամբարաններից (աղ. 1, նկ. 1,3), Շիրակավանից՝ պատահականորեն (աղ. 1, նկ. 2) և Լենինականից հայտնաբերված մանգաղները, որոնք բվագրվում են մ. թ. ա. 12-11-րդ դարերով⁶: Արթիկի թիվ 633 դամբարանից գտնված

¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 114:

² Է. Խանզադյան, Գարնի, վայսկ 4, սր. 127, տալ. 35.

³ Գ. Արեշյան, Հոյութ արքական հայութ (հետայժութեական պատմություն), ՊԲՀ, 1969, էջ 172, նկ. 25:

⁴ Տ. Խաչարյան, Օրույն արքական պատմությունը՝ Հայաստանի պատմական պատմական բանական բանական պատմությունը, Եր., 1959, էջ 214; Ա. Մարտիրոսյան, Հայաստան առ պատմությունը՝ Հայաստանի պատմությունը, Եր., 1964, սր. 130-131, 133:


⁵ Գ. Արեշյան, Օրույն արքական պատմությունը՝ Հայաստանի պատմությունը, Եր., 1970, 3, էջ 257-258:

⁶ Տ. Խաչարյան, Դրեմայի կուլտուրա Շիրակ, Եր., 1975, սր. 206; Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզ գեղարյան բնակավայրերն ու դամբարանադաշտերը, Հայաստանի հնագիտական հուշարձաններ (հետայժութեական պատմություն), 2, պատահական պատմություն, Եր., 1969, աղ. 4, նկ. 6:

մանգաղը քերի է, չկա վերին հատվածը, որը և դժվարացնում է դրա տարրերակումը: Մանգաղը թվագրվում է մ. թ. ա. 12-11-րդ դարերով⁷:

թ) մանգաղներ, որոնց բռնակին ամրացվող հատվածը կլորավուն է, սայրը՝ նեղ, իսկ անցքերը՝ արված են խստ թեքությամբ, գրեթե ուղղահայաց: Նման մանգաղներ հայտնաբերվել են Չերիի թիվ 36 դամբարանից (աղ.1, նկ.4) և Անիից (աղ.1, նկ.5): Չերիի մանգաղը թվագրվում է մ. թ. ա. 10-9-րդ դարերով⁸, իսկ Անիինը՝ մ. թ. ա. 9-8-րդ դարերով⁹:

ՏԱԿԱՑԱԿ 1



⁷ Տ. Խաչարյան, Դревняя культура..., стр. 206.

⁸ Լ. Պետրոսյան, Раскопки памятников Кети и Воскесака, Ер., 1989, стр. 65, табл. 60 рис. 7.

⁹ Տ. Խաչարյան, Եղվ. աշխ., էջ 212-213:

Նմանատիպ մանգաղներ հայտնաբերվել են Թաքիայից¹⁰, Խաշտարակից¹¹, Լուսաձորից¹², Նոր Բայազետից:¹³ Բոլորն էլ թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջով:

Վերը ներկայացված մանգաղներն իրենց գուգահեռներն ունեն Անդրկովկասի համաժամանակյա հուշարձաններում՝ Վրաստանում հայտնաբերվել են Բեշտաշեն-Սաֆար-Խարաբա թիվ 4 և թիվ 13 դամբարաններից, Աղբեշանում Գետաբեկից¹⁴:

Բացի բրոնզի մանգաղներից Հայաստանում մ.թ.ա. 1-ին հազարամյակից սկսած հանդես են զախիս երկար մանգաղները, որոնք ի տարրերություն բրոնզից պատրաստվածների ունենալ բավական նեղ շեղը, որի մեջի մասը հաստ էր և բարակում էր դեպի սայրը, օժտված էր պոչուկով՝ բռնակն ամրացնելու համար:

Հայտնաբերվել են Արքիլի թիվ 209 և 539 դամբարաններից և թվագրվում են մ.թ.ա. 10-9-րդ դդ.¹⁵(աղ.1, նկ. 6,7): Երկար մանգաղներն իրենց գուգահեռներն ունեն Նոր Բայազետում, Բասարգեչարում,¹⁶ Քակուղիսետում, Մելանիում,¹⁷ Վարդանիում¹⁸:

Տ. Խաշտարյանը, հիմք ընդունելով Վ. Լևաշլայի մանգաղների ուսումնասիրության մերոդը, Հայաստանից հայտնաբերվածները առանձնացնում է երեք հիմնական տարրերակիչ հատկանիշներով (հիմքի նկատմամբ սայրի աղեղի բարձրությունը, սայրի աղեղի զագարի դիրքը և շեղի առջևի և վերջին նասերում սայրի կորության թերությունը), ցույց է տալիս դրանց զարգացումը և արտադրողականության բարձրացումը¹⁹:

Այս տեսանկյունից դիտարկելիս մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերված մանգաղները աշքի են ընկնում իրենց կատարելությամբ և բարձր արտադրողականությամբ: Ինչ վերաբերում է երկար մանգաղներին, հավանաբար երկրագործության մեջ դրանց աշխատանքի արդյունավետությունը կապված էր այն բանի հետ, որ համեմատած բրոնզի հետ, երկար ավելի երկար էր դիմանում և հեշտ էր սրվում: Ընդհանրացնելով նշեմք, որ հեճանք գործիքների կատարելագործումը փաստում է տնտեսության զարգացածության նախն, որն առաջին հերթին արտահայտվում է երկրագործական գործիքների վրա կատարված փոփխություններով:

Երկժամկետը. Երկրագործության մեջ կիրառված մյուս աշխատանքային գործիքը կարելի է համարել երկժամկետ: Չնայած մեզ հետաքրքրող տարածաշրջանից չեն հայտնաբերվել, բայց նշենք, որ Լաշենից հայտնաբերվել են նաև մ.թ.ա. 14-13-րդ դարերով թվագրվող²⁰ եռածանիներ: Մ.թ.ա. 12-11-րդ դարերով թվագրվող հուշարձանների համար բնորոշ են երկժամկետը: Մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերվել են միայն բրոնզե երկժամկետը, որոնք ներկայացնում ենք երկու խմբով. ա) երկժամկետը որոնք ունեն երկար, ամբողջական միաձոյլ խողովակածն կորառ, որը ներքեւում խիստ հաստանում է՝ առաջացնելով խողովակածն ժապավեն և տպավորություն ատեղում, թե կորառի վրա լրացուցիչ խողովակ է հաջողված: Նմանօրինակ երկժամկետը հայտնաբերվել են Լենինականից (աղ.1, նկ.8) ու Լոռի Բերդից (աղ.1, նկ.9) և թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դարերով²¹: Հայտնաբերվել են նաև Ներքին Աղյամանից,

¹⁰ Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան..., աղ. 4 նկ. 7-8:

¹¹ Ս. Եսայան, Կոլլեցիա պլեմեն սևեր-արևոտական Արմենիա, Եր., 1976, стр. 105, տալ. 85 բար. 7-10.

¹² Ս. Եսայան, Աշվաշին, էջ 106-107, աղ. 90 նկ. 5:

¹³ Տ. Խաչատրյան, Աշվաշին, էջ 212-213:

¹⁴ Տ. Բոնյատ, Զեմլեգել և սկոտություն Ազերբայջանում բրոնզադարյան շրջանում, Երևան, 1957, стр. 42.

¹⁵ Տ. Խաչատրյան, Դրամական կոլլեցիա պլեմեն սևեր-արևոտական Արմենիա, Երևան, 1976, տալ. 237.

¹⁶ Տ. Խաչատրյան, Աշվաշին, էջ 215, նկ. 50 (6-7):

¹⁷ Կ. Պուշկար, Դրամական կոլլեցիա պլեմեն սևեր-արևոտական Արմենիա, Երևան, 1976, տալ. 121.

¹⁸ Օ. Ճանիելյան, Կոլլեցիա պլեմեն սևեր-արևոտական Արմենիա, Երևան, 1969, տալ. 2.

¹⁹ Տ. Խաչատրյան, Աշվաշին, էջ 213:

²⁰ Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր ու դամբարաններ, ՀՀ, պարկ 2, Երևան, 1969, աղ. 6, նկ. 3,4:

²¹ Ա. Մարտիրոսյան, Արմենիա բրոնզադարյան ժամանակաշրջանում, Պատմություն պատմագրական պատմություն, Երևան, 1986, թիվ 3, էջ 116, աղ. 3, նկ. 1:

Սովորականաբ-Թափայից, Արօանքրից²², Սինգեչառիքից²³: Ս. Եսայանը ենթադրում է, որ երկժամկետի այս խումբը բնորոշ է Հյուսիսային Հայաստանին²⁴: բ) Երկժամկետը, որոնց կորաղը ոչ թե զլանածն, այլ լայնարեքան է: Արանց կորառների վրա արված են ցայտուն երևացող զանիկ-թմրիկներ: Այս խումբը կազմող երկժամկետը հայտնարերվել են Վարդաքարից (աղ.1, նկ.10), Մուսիերիից (աղ.1, նկ. 11) և Կիրովականից (աղ.1, նկ.12): Վարդաքարի գտածոն բվագրվում է մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներով, իսկ Կիրովականի և Մուսիերիի օրինակները մ.թ.ա. 11-10-րդ դարերով²⁵: Նմանօրինակ երկժամկետը հայտնարերվել են Սովորականաբ-Թափայից, Թաք-Կիլսիկից, Բաղդարիից²⁶: Ի դեպք, Կ. Պիցիսելառուրին ևս գտնում է, որ դրանք ներմուծված են Հայաստանի հյուսիսային շրջաններից²⁷:

Երկժանիների կիրառման ոլորտի հետ կապված՝ կան տարրեր կարծիքներ: Այսպես, Մորգանը բրոնզե երկժանիները կապում է Կենդանու պաշտամունքի հետ²⁸: Կոչնարյուղան գտնում է, որ Անդրկովկասից հայտնաբերված բրոնզե երկժանիների մեծ մասը գենքեր են²⁹: Հ. Մանացականյանը դրանք դիտարկում է որպես իշխանության խորհրդանշիներ³⁰: Մինձէառորի հետազոտողները, Բ. Պիտորովսկին երկժանիները ներկայացնում են որպես աշխատանքային գործիք³¹: Զաֆարզադեն, հենվերդ Գործատանի մի քանի ժայռապատկերների վրա, որ հեծյալի ձեռքում կա երկժանի, գտնում է, որ դրանք հեծյալ որորդների գենք են եղել³²: Իսկ Մակլայը գտնում է, որ դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ իշխանության խորհրդանշիներ³³: Ս. Եսայանը Հայաստանց հայտնաբերված նմանօրինակ երկժանիները համարում են իշխանության խորհրդանիշ³⁴: Հ. Մարտիրոսյանը Վարդաքարի և Կիրովականի օրինակները դիտարկում է որպես գենքեր³⁵: Վարդաքարի երկժանու հետ կապված՝ այլ է Թ. Խաչատրյանի կարծիքը: Նա գտնում է, որ այն օստազործվել է տնտեսության մեջ³⁶:

Նկատի ունենալով Վերը նշված կարծիքները, նշեմք, որ մեր կողմից ներկայացված երկժամկերը չին կարող օգտագործվել ոչ որպես աշխատանքային գործիք, ոչ էլ որպես զենք: Դրանց ժանիները շատ բարակ են ու երկար, բայց միաժամանակ սրածայր: Վերջին հանգամանքը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ դրանցով միգուց կրակի վրա շուռումուն են տվել զինարերված կենդանուն: Բայց ամենահավանականը S. Խաչատրյանի հայտնած կարծիքն է, նա գտնում է, որ դրանք օգտագործ-

²² Ե. Լալայի անձնագիրը պեղումներից կորհրդային Հայաստանում, Եր., 1931, էլք. 134; < Սարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան դամբարանների ..., աղ. 6, էլք. 5: Կ. Կոշինեա, Նекоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе. СА. 27. М., 1957, рис. 7.

²³ С. Казиев. Археологические раскопки в Мингечавре. МКА. I. Баку. 1949, рис. 17.

²⁴ С. Казис, Археологические раскопки в Мингистауре, МКА, 1, Баку, 1947, рис. 11.

²⁴ С. Есалян, Символы власти рода-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа, «Известия УрГУ», 1989, 2, № 26.

²⁵ Т. Хачатрян, Комплекс бронзовых предметов из селения Вардакар, *Տեղեկագիր, ՀՍՍՀ-Ա, Եղեգնաձևություն, 1961, 3, լու 69; Ա. Մատուրյան, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 144-145.*

²⁶ К. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, 27, М., 1957, стр. 10; С. Гасанлы, Старообрядческая архитектура Азербайджана, под ред.

²⁷ М., 1957, стр. 10; С. Есаян, Символы власти рода-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа, табл. 3, рис. 4; Б. Кутфияц, Археологические раскопки в Триалети, табл. 30; К. Пишчелаури, Древняя культура племен..., табл. 15.

²⁸ *Ide Mardon Mission Scientifique au Caucase, Paris, 1980, p. 124.*

²⁸ J-de Morgan, *Mission Scientifique au Caucase*, Paris, 1989, p. 134.

²⁹ К. Кушн арева, նշան, էջ 168:

³⁰ А. М и а ц а к а н я н, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956г, СА, выш. 2, 1957, стр. 101.

³¹ Т. Асланов, Р. Вайдов, Г. Ионе, Древний Мингечаур, Баку, 1973, стр. 286, табл. 46.

³² И. Джафарзаде, Гобустан (Наскальные изображения), Баку, 1973, стр. 286, табл. 46 рис. на камнях 9, 38-40.

³³ J. Makkay, Metal Forks as symbols of power and religion. *Acta archeologica academieae Scientiarum Hungaricae* 35 (3-4), Budapest 1983, p. 313-344.

³⁴ С. Е с а я н, *Символы власти рода-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа*, стр. 25-29.

³⁵ А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 144.
³⁶ Т. Хачатрян, Комплекс бронзовых предметов из селения Вардакар, стр. 66.

1. А а ч а т р я н, комплекс бронзовых предметов из селения Вардакар, стр.

վել են տնտեսության մեջ կամ կապված են եղել երկրագործական սովորույթների հետ³⁷: Վ. Բդրյանը գտնում է, որ այս եղանակները ծառայել են հավաքչության այնպիսի բնագավառներին, որպիսիք էին վառելանյութերի, ցամկապատերի, ծածկերի և այլ նպատակների ծառայող փշարույսների հավաքումը: Դրանք ըստ նրա հավաքչության տնտեսության մեջ իրենց ունեցած դերի շնորհիվ վերածվել էին խորհրդանշիչի: Կամ դրանցով կալում աշան էին անում և շրջում առաջին 3-4 երեսները: Այս եղանակով հավաքում էին գերանոր քաղած խոտը և երրեմն փոցիսում խոտի մնացորդը³⁸:

Այսուամենայնիվ չի ժխտվում նաև երկժանու տնտեսական գործիք լինելու հանգանանքը: Հենց նրա սրբազն կամ իշխանական պատկանելիք հանդիսանալու տեսակնետը բխում է այդ առարկայի տնտեսական նշանակությունից: Երկժանին կամ եռաժանին իր զուտ երկրագործական նշանակությամբ տվյալ ժամանակահատվածում առարկայացել է որպես սրբազն-քրմական կամ իշխանական խորհրդանշան: Վերջինիս զաղափարը ծագել է նրանից, որ երկժանին կամ եռաժանին զյուղատնտեսական -երկրագործական աշխատանքների ժամանակ հավանաբար եղել է զերդաստանի հոր՝ նահապետի ձեռքին: Իսկ վերջինս, հանդիսանալով գերդաստանի իրավական տերը, իր ձեռքին է կենտրոնացրել իշխանությունը թե հասարակական կյանքում և թե տցիալ-տնտեսական հարաբերությունների ու հոգևոր պաշտամունքային ծիսակատարությունների մեջ: Այսուհետև սոոհնային նահապետի նշանակությունը անցնում է ցեղային իշխանի տիրապետության զաղափարի մեջ և դա այլարանորեն կարող էր արտահայտվել երկժանիով, որպես նախկինի ձեռքին եղած սովորական գործիք, որի զյուղատնտեսական նշանակությունը արդեն խորհրդանշանի ձևով շարունակում է պահպանել իր դերը, իիր ցեղապետի կամ իշխանի իրավագորության խորհրդանշանյին արտահայտություն: Տնտեսության մեջ երկժանիների օգտագործումը փաստում է երկրագործական գործիքների զարգացած ձևերի առկայությունը:

Այսպիսով, գործիքների կատարելագործումը փաստում է տնտեսության զարգացության մասին, որն առաջին հերթին արտահայտվում է երկրագործական գործիքների վրա կատարված փոփոխություններով:

ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКИЕ ОРУДИЯ ТРУДА ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА СЕВЕРО-ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Резюме

Г. Мсрян

Из памятников и могильников эпохи поздней бронзы и железа северо-западной Армении раскопано много земледельческих орудий труда, в том числе серпы и вилы. Делается попытка типологии и классификации этих орудий. Отмечается усовершенствование серпов и вил, которое документирует развитие хозяйства, а это, в первую очередь, отражалось на изменениях, происходящих с земледельческими орудиями труда.

³⁷ Т. Խ ա չ ա ր յ ա ն, Կոմплекс бронзовых предметов из селения Вардакар, стр. 66.

³⁸ Վ. Բ դ ր յ ա ն, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 51-53, 361: